1. **Ծրագրի մասին ընդհանուր տեղեկություններ**

Կազմակերպությունը պետք է ներկայացնի.

- ծրագրի անվանումը,
- ծրագրի նպատակը և կարճ նկարագրությունը,
- սոցիալական խնդիրը, որի լուծմանն ուղղված է ծրագիրը,
- սպասվող արդյունքներն ու սոցիալական ազդեցությունը,
- ծրագրի թեմատիկ ուղղությունը (կրթություն, առողջապահություն, բնապահպանություն, սոցիալական աջակցություն և այլն):

2. Տեղեկություններ կազմակերպության մասին

Պարտադիր է ներկայացնել.

- կազմակերպության իրավաբանական ամբողջական անվանումը,
- գրանցման տարին և իրավական կարգավիճակը,
- գործունեության և առաքելության նկարագրությունը,
- վերջին 3 տարիների ընթացքում իրականացված հիմնական ծրագրերը,
- գործող գործընկերները, դոնորները կամ համաֆինանսավորման աղբյուրները (առկայության դեպքում),
- կոնտակտային անձ (ԱԱՀ, պաշտոն, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե):

3. Գրանցման և հիմնադիր փաստաթղթերի փաթեթ

Կազմակերպությունը պետք է ներկայացնի.

- պետական գրանցման վկայականը,
- կազմակերպության կանոնադրությունը,
- կազմակերպության տնօրենի անուն, ազգանուն, հայրանուն,
- կազմակերպության իրավաբանական հասցե, բանկային հաշիվ, ՀՎՀՀ,
- ղեկավար մարմնի և խորհրդի անդամների կազմի ցանկը:

4. Ծրագրի մանրամասն բյուջե

Բյուջեն պետք է պարունակի.

- ընկերությունից պահանջվող գումարի չափը,
- ծրագրի բյուջեի նախահաշիվը՝ մանրամասն հոդվածների բաշխմամբ (կարևոր է նշել, որ ներկայացված և «Վիվա Արմենիա»-ի կողմից հաստատված նախահաշիվը ծրագրի իրականացման ընթացքում փոփոխման ենթակա չէ և հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը),
- բյուջեի մեջ ներկայացված յուրաքանչյուր հոդվածի գծով ենթակապալառուն (այսինքն՝ որ ընկերությունն է տրամադրում համապատասխան ապրանքը/ծառայությունը),
- յուրաքանչյուր ծախսային հոդվածի հիմնավորումը,
- վարչարարական ծախսերի բաժինը (ոչ ավելի, քան 10%, սակայն կարող է փոփոխվել՝ կախված ծրագրի բնույթից):

5. Ծրագրի իրագործման պլան

Պետք է նշել.

- ծրագրի մեկնարկի և ավարտի ժամկետները,
- կազմակերպության պատասխանատուների տվյալները:

6. Թափանցիկության և հաշվետվողականության պահանջներ

Կազմակերպությունը պարտավորվում է.

- ներկայացնել միջանկյալ և վերջնական հաշվետվություններ ծրագրի իրականացման վերաբերյալ,
- տրամադրել իրականացումը հաստատող լուսանկարներ և տեսանյութեր,
- ներկայացնել ֆինանսական հաշվետվություն՝ հատկացված միջոցների օգտագործման մասին,
- նախապես համաձայնեցնել ընկերության բրենդի ցանկացած օգտագործում:

<u>Առողջապահական ծրագրերի համար</u>

Առողջապահական ծրագրերի համար, վերոնշյալ պահանջներին զուգահեռ, անհրաժեշտ է ներկայացնել նաև.

1. բարձրացվող առողջապահական խնդրի հիմնավորում

Կազմակերպությունը պետք է ներկայացնի.

- խնդրի ընթացիկ իրավիճակի նկարագրություն՝ տարածվածության մակարդակի և խոցելի խմբերի հստակ ներկայացմամբ,
- խնդրի կարևորությունն ու հրատապությունը համայնքի/թիրախային խմբի համար,
- հիմնավորում, թե ինչու է անհրաժեշտ աջակցության տրամադրումը տվյալ տարածաշրջանում կամ խմբում:

2. Թիրախային խմբի հստակ սահմանում

- տարիքային, սոցիալական, բժշկական առանձնահատկություններ,
- խոցելիություն կամ հատուկ կարիքներ (երեխաներ, տարեցներ, հաշմանդամություն ունեցողներ և այլն),
- շահառուների ակնկալվող թիվը:

3. Մասնագիտական և բժշկական հիմնավորումներ (այս կետը վերաբերում է այն ծրագրերին, որոնք իրականացվելու են մասնագիտացված բուժհաստատության կողմից)

Կազմակերպությունը պետք է ներկայացնի.

- արտոնագրված, մասնագիտացված անձնակազմի առկայություն,
- առողջապահության նախարարության կամ համապատասխան մարմինների թույլտվությունները (եթե պահանջվում են),
- դեղորայքի, սարքավորումների կամ ծառայությունների համապատասխանությունը անվտանգության նորմերին:

4. Մասնագիտական գործընկերների առկայություն

Կազմակերպությունը պետք է ցույց տա.

- համագործակցությունը բժշկական կենտրոնների, համայնքային առողջապահական ստորաբաժանումների, ԱՆ հաստատությունների կամ ոլորտային մասնագետների հետ (կնքված պայմանագրի տեսքով),

- պարտավորությունների և դերաբաժանման հստակ սահմանումը:

5. Բյուջեի հատուկ պահանջներ առողջապահական ծրագրերի համար

- ընկերությունից պահանջվող գումարի չափը,
- ծրագրի բյուջեի նախահաշիվը՝ մանրամասն հոդվածների բաշխմամբ՝ ըստ յուրաքանչյուր ծառայության/սարքավորման/դեղորայքի հստակ նշմամբ (կարևոր է նշել, որ ներկայացված և «Վիվա Արմենիա»-ի կողմից հաստատված նախահաշիվը ծրագրի իրականացման ընթացքում փոփոխման ենթակա չէ և հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը),
- բյուջեի մեջ ներկայացված յուրաքանչյուր հոդվածի գծով ենթակապալառուն (այսինքն՝ որ ընկերությունն է տրամադրում համապատասխան ապրանքը/ծառայությունը),
- սարքավորումների և դեղերի գնման դեպքում՝ սերտիֆիկատների և համապատասխանության փաստաթղթերի ներկայացում,
- վերապատրաստման/կրթական ծրագրերի համար՝ դասընթացների ծրագրերը և ժամկետները,
- վարչարարական ծախսերի բաժինը (ոչ ավելի, քան 10%, սակայն կարող է փոփոխվել՝ կախված ծրագրի բնույթից):

6. Ծրագրի կայունություն և շարունակականություն

Ծրագիրը պետք է պատասխանի հետևյալ հարցերին.

- ինչպե՞ս է ապահովվելու արդյունքների երկարաժամկետությունը,
- արդյո՞ք ծրագիրը կնվազեցնի առողջապահական ռիսկերը նաև ապագայում,
- արդյո՞ք նախատեսվում են շարունակական վերահսկման կամ բուժման մեխանիզմներ:

7. Հաշվետվողականություն և թափանցիկություն

Պարտադիր է ներկայացնել.

- հաշվետվությունների ամփոփ ժամկետները,
- Բժշկական փաստաթղթեր. կարևոր է նշել, որ կից պարտադիր պետք է ներկայացվի բուժառուի գրավոր համաձայնությունը՝ հաստատելով, որ վերջինս չի առարկում, որ ծրագրի շրջանակում իր տվյալները փոխանցվեն «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ին,
- հաշվետվություն՝ լուսանկարներով և տեսանյութով. կարևոր է նշել, որ կից պարտադիր պետք է ներկայացվի բուժառուի գրավոր համաձայնությունը՝ հաստատելով, որ վերջինս չի առարկում, որ ծրագրի շրջանակում իր տվյալները փոխանցվեն «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ին: